յիշիսոզ թագաւորութեամբ յազգէն մերմէ 'ի վերայ մեր. ուրեմն մի՛ լիցի կամք և ընդունելութիւն մեզ, զի այսու յետ կրկին մտանել 'ի մէջ ազգին Հայոց թագաւոր և կամ իշխան և կամ զօրագլուխ 'ի ոչոք իշխանութեամբ ինքնակալ ոմն, վասն զի ոչ ծնաւ մարդ աշխարհ որ ոչ մեղիցէ բայց փրկիչն մեր Քրիստոս. ուրեմն յոյժ բարի վասն մեր և վասն աշխարհին մերոյ լիցի զի ազգն Հայոց ամենեքեան ազատապէս բնական բնութեամբ իւրեանց թագաւորեսցեն 'ի վերայ տանն իւրեանց, բառնալով խէթ և նախանձ և ժլատութիւնք, զի ոչ գոցի ոմն մեծ և ոմն փոքրիկ, ամենեքեան հաւասարապէս ստանայցեն Շուք թագաւորութեան 'ի ժամու ծննդեան իւրեանց, և թագաւոր կացցեն ամենայն աւուրս կենաց իւրեանց 'ի վերայ սեպհական աշխարհին իւրեանց մինչև յաւիտեան. բարիոք գիտեմ ես, զի ընթերցող սմայ զարհուրի 'ի վերայ բանին իմոյ ասացելոյ, զի ազգ մի բոլոր զի՞ արդ կարէ թագաւոր լինել 'ի վերայ աշխարհին միոյ. վասն այդպիսի մտածողաց հարցանեմ ես, ուրեմն զի արդ՝ կարէ միմիայն այր մի թագաւորել 'ի վերայ բոլոր ազգի և 'ի վերայ ժողովրդեան ազատի. զի՛ ոչ ունի ինքն ընդ իւր ոչինչ յաւելի քանթէ զօրութիւն միոյ հասարակ առն. եթէ մեզ կամք է՞ զի կացցուք և մնասցուք ազատ որպէս Արարիչն Աստուած 'ի սկզբանէ արար մեզ, ու-